

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ
ԱՍԲՈՂՋԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, 2011-2012
THE MAIN RESULTS OF THE HOUSEHOLD INTEGRATED LIVING CONDITIONS
SURVEY FOR 2011-2012**

Հետազոտության իրականացման համար կատարվել է ըստ մարզերի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք:

Հետազոտությունն իրականացվել է հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում: Տնային տնտեսությունների (SS) ընտրությունը կատարվել է ամսական պարբերականությամբ՝ ռոտացիոն եղանակով:

Հետազոտությունն իրականացվել է ողջ տարվա ընթացքում՝ 2011թ. ուսումնասիրելով 7872 SS, իսկ 2012թ.՝ 5184 SS: Հետազոտության արդյունքները տարածվել են գլխավոր համակցության նկատմամբ (կշռվել են) և ներկայացուցչական են մարզային կտրվածքով:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և դրանց հաշվարկման հիմքում ընկած մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և (կամ) Եվրամիության վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) կողմից առաջարկվող սահմանումներին ու դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները՝ միաժամանակ ապահովելով համադրելիությունը միջազգային համանման ցուցանիշների հետ:

Բնակչության տնտեսական ակտիվության կարգավիճակը բնութագրող ցուցանիշները հիմնված են **15-75** տարեկան **առկա բնակչության** պատասխանների՝ անձնական (սուբյեկտիվ) գնահատականների վրա, ինչի արդյունքում ստացված տվյալներն առանձին դեպքերում կարող են տարբերվել իրականությունից:

Դիտարկվող ժամանակահատվածը եղել է հետազոտվող յուրաքանչյուր ամսում հարցմանը նախորդող **վերջին մեկ շաբաթը**:

Յուրաքանչյուր հարցվող ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի դասակարգվել է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված, գործազուրկ, տնտեսապես ոչ ակտիվ**:

A random two stage sample by regions (marzes) has been designed to conduct the survey.

The survey has been conducted in all urban and rural settlements of the republic. The selection of households (HH) has been done monthly by the rotation principle.

The survey has been carried out during the whole year by surveying of 7872 HH in 2011 and 5184 HH in 2012. The survey results were extrapolated to the general population (weighted) and are representative at the marze level.

The concepts, set of indicators and methodology of calculation underlying the survey basically comply with the definitions and concepts recommended by the ILO and (or) Eurostat, while taking into account the peculiarities of their application in Armenia to the extent possible, at the same time, by providing the comparability with the international similar indicators.

The following findings on economic activity status of population are based on the responses / on the personal (subjective) assessment of **15-75 year-old de facto population**; therefore the received data in some cases can differ from reality.

Reference period was the last one week preceding the survey.

Each respondent was classified into the following mutually exclusive groups by status of economic activity – **employed, unemployed and population not economically active (inactive)**.